Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի
2025-2026 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
9 – րդ դասարան

1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ 2միավոր

ա. Աղստև գետի ավազանը տարածվում է ՀՀ երեք մարզերի տարածքում
բ. Մեծամոր գետն իր ամենախոշոր վտակից կարճ է
գ. ՀՀ տարածքում՝ ներառյալ սահմանները, ամենաերկարը Արաքս գետն է
դ. Գեղարքունիքի մարզի բոլոր գետերը պատկանում են Սևանա լճի ավազանին
ե. Աշխարհի բնակչության հարաբերական աճի ցուցանիշը շարունակաբար նվազում է՝ սկսած 1960-ական թթ.
զ. Աշխարհի բնակչության բացարձակ աճը առավելագույնն է եղել 1960-ական թթ.
է. Բնակեցված աշխարհամասերից բացասական բնական աճ ունի միայն Եվրոպան
ը. Տարածաշրջաններից տարեկան բացարձակ աճի ցուցանիշով առաջատարը Հարավային Ասիան է

2. Ի՞նչ են նշանակում եզրույթներից յուրաքանչյուրը (յուր՝ 0.5միավոր) 1միավոր

ա. Պայմանական վառելիք բ. Սահմանային շերտ

3. Նկարագրով որոշել պետությունը 1միավոր

Հյուսիսային ծովին հարող այս միապետությունը, չնայած նավթային պաշարներին, մեծամասամբ իր էլեկտրաէներգիան արտադրում է ջրային էլեկտրակայաններում: Յուրահատուկ է նաև տրանսպորտային ցանցի կոնֆիգուրացիան, որը գծային է:

4. Ինչպե՞ս է կոչվում.

ա. Ջրային միջավայրում բույսերի ու կենդանիների արհեստական աճեցումը 1միավոր
բ. Տվյալ վայրում տարվա ընթացքում անամպ, արևոտ ժամերի գումարը 1միավոր

5. Խնդիրներ

ա. Օդերևութաբանական Ա և Բ կայանները միմյանցից գտնվում են 20կմ հեռավորության վրա: Նույն պահին Ա կայանում գրանցվել է 740մմ ս.ս., իսկ Բ կայանում՝ 600մմ ս.ս.: Որքա՞ն է այդ կայանների միջև հարաբերական բարձրությունը և միջին թեքությունը: 1միավոր

բ. Ա և Բ կետերը, գտնվելով միևնույն միջօրեականի վրա, միմյանցից հեռու են 110^0: Քանի կիլոմետր է նրանց միջև առավելագույն հեռավորությունը միջօրեականի ուղղությամբ:
1միավոր

6. Ելնելով մի շարք երկրների երկաթգծերի երկարությունների (կմ) տվյալների շարքից՝ մեկ տրամագրում գծեք այդ երկրների երկաթուղիների երկարության փոփոխությունների կորերը (1միավոր) և պատասխանեք հարցերին:

Երկիր	Տարեթիվ				
	1995	2000	2005	2010	2020
ԱՄՆ	201284	194077	194025	194431	148553
Չինաստան	54616	58656	62200	66239	112072
Հնդկաստան	62660	62759	63485	63974	68043
Գերմանիա	41718	36642	34228	33714	33401

ա. Ո՞ր երկիրն է գրանցել երկաթուղիների երկարության հարաբերական փոփոխության ամենամեծ ցուցանիշը 1995-2020թթ. ժամանակահատվածում և որքա՞ն է եղել այդ ցուցանիշը
1միավոր

բ. Ի՞նչ օրինաչափությամբ են փոխվում զարգացող երկրների երկաթուղիների երկարությունը և ինչու՞ 1միավոր

7. Դասավորել ՀՀ բնության պահպանվող տարածքներն ըստ կազմավորման ժամանակագրության հնից դեպի նորը 1միավոր

Էրեբունի արգելոց, Սևան ազգային պարկ, Արփի լիճ ազգային պարկ, Շիկահողի արգելոց

8. Կարճ պատասխանով հարցեր: Յուրաքանչյուրին տրվում է զումարային 1 միավոր

ա. ՀՀ տարածքում որտե՞ղ են ամենաշատը տարածվում աղուտ-ալկալի հողերը (0.5միավոր) և ինչու՞ (0.5միավոր):

բ. Ո՞րն է ջրային սահմանների երկարությամբ առաջատար երկիրը (0.5միավոր) և ինչու՞ (0.5միավոր):

9. Ուսումնասիրեք ՀՀ տարածքում գծված ռելիեֆի կտրվածքը և ա) համապատասխանեցրեք ստորև թվարկած օբյեկտները կտրվածքի վրա նշված տառերին: Օրինակ՝ Աժդահակ լեռ – Դ: Յուրաքանչյուր ճիշտ զույգը՝ 0.25միավոր;

Աժդահակ, Արփի լիճ, Երևան, Շիրակի դաշտ, Արագած, Սևանա լիճ

բ) Նշեք, թե հորիզոնի ո՞ր կողմ պետք է շարժվել ա-ից գ և դ-ից ե տեղափոխվելիս (յուրաքանչյուրը՝ 0.25միավոր):

10. Պատասխանեք հարցերին՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումները

ա. ՀՀ տարածքում ռելիեֆի ինչպիսի տարրերն են աչքի ընկնում քամու էներգիայի ամենամեծ ներուժով և ինչու՞: 1միավոր

բ. Ո՞ր օվկիանոսի ջուրն է միջինում ամենատաքը և ինչու՞ է այդպես 1միավոր

11. Ներկայացված բնութագրերը համապատասխանեցնել քարտեզում 1-8 թվերով նշված օբյեկտներին (օր.՝ Ա-1): Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը՝ 0.25միավոր

Ա. Մայրցամաքային ծագման է, ունի 90% էնդեմիզմ, բնակեցված է անցումային ռասայի ժողովրդով, որոնք պաշտոնապես կիրառում են ինչպես տեղական, այնպես էլ ֆրանսերեն լեզուն: Հայտնի է կարստային ռելիեֆով:

Բ. Մայրցամաքային ծագման է, էնդեմիզմի բարձր տոկոսով: Կրոնը մահմեդականությունն է: Վարչականորեն Աֆրիկայի կազմում չէ:

Գ. Հրաբխային ծագման է: Հայտնի է որպես Նապոլեոն Բոնապարտի աքսորավայր:

Դ. Հրաբխային ծագման է, Պորտուգալիայի երկրորդ ամենահարուստ վարչական շրջանն է:

Ե. Հրաբխային ծագման է, հարուստ կենսաբազմազանությամբ: Ժողովուրդը պորտուգալախոս է: Աչքի է ընկնում սուրճի և կակաոյի մշակությամբ:

Զ. Հրաբխային ծագման է: Իսպանիայի ինքնավար տարածքներից մեկն է: Թարգմանաբար նշանակում է շների կղզի:

Է. Կորալային ծագման է, էնդեմիկների մեծ բազմազանությամբ: Բնակչության շրջանում հիմնական լեզուներն են ֆրանսերենը և անգլերենը:

Ը. Հրաբխային ծագման է: Անվանակոչվել է Աֆրիկայի համանուն հրվանդանի պատվին: Ներկայումս անկախ պետություն է:



Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան